

ՓԱՌՆԱԻԱԶԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱԽՈՐ

(ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՆԿՄԱՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ
ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ԿԱՄ ՍԵԲԷՈՍԵԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ)¹

Ք.ա. է. դարի վերջի - Ք.ա. Ջ. դարի առաջին կեսի Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների պատմութեան աղբիւրագիտական հենքը բաւական աղքատիկ է: Չափազանց սակաւ են նաեւ հնագիտական նիւթերը եւ դարաշրջանի քաղաքական զարգացումների մասին իրական պատկերացում կազմելու լիարժէք հնարաւորութիւն չեն ընձեռում: Իսկ անտիկ ու վաղ միջնադարեան հայ մատենագիրների երկերում առասպելական ու վիպական տարրերն այնքան գերակշռող են, որ անզգոյշ մեկնաբանութիւնը շատ յաճախ յանգեցնում է թիւրիմացութիւնների ու անհիմն եզրայանգումների:

Իրականում, անկախ այն հանգամանքից, Ասորեստանի անկման գործընթացում հայերն իրենց մասնակցութիւնը ցուցաբերել են թէ ոչ, միեւնոյն է, պէտք է առաջնահերթ լինի մասնակցող կողմի կարգավիճակի հարցը: Նշուած ժամանակահատուածում Հայկական պետութեան գոյութեան վերաբերեալ հիմնական աղբիւրներն են Պատմահայր Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» եւ Քսենոփոնի «Կիրոսպեդիա» երկը, աշխարհի «Բաբելոնեան» քարտէզը² եւ այլն: Սակայն, եթէ Խորենացին խօսում է թագաւորութեան առաջացման մասին³, ապա երկրորդում գոյութեան⁴:

1 Յօդուածը քննարկելու եւ դիտարկումներ անելու համար մեր խորին շնորհակալութիւնն եմք յայտնում Ա. Վ. Քոսեանին ու Հ. Մարտիրոսեանին:

2 HORWITZ, W., *The Babylonian Map of the World*, I, Iraq 1988, 148ff.

3 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, ԱԲԵՂԵԱՆ, Մ. - ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ա., (աշխտ.), Տփղիս 1913, I, ԻԱ, 65:

4 ՔՍԵՆՈՓՈՆ, *Կիրոսպեդիա*, ԿՐԿԵԱՇԱՐԵԱՆ, Ս., (թրգմ. եւ ծնթ.), Երեւան 2000, II, 4; 12-25, 31; III, 1, 1-43 եւ այլուր:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՏՆԱԽՈՐԲԸ

Ք.ա. Է. դարի վերջին քառորդում սկսված ասուրա-բաբելոնեան հակամարտությունը շատ արագ վերածուեց ասուրական եւ հակա-ասուրական խմբաւորումների միջեւ պայքարի՝ ընդգրկելով ամբողջ Մերձաւոր Արեւելքը՝ Հայկական լեռնաշխարհից մինչեւ Եգիպտոս ու Արեւելամիջերկրածովեան աւազանից մինչեւ Իրանական բարձրաւանդակ։ Ք.ա. 626-610ի ընթացքում բաբելացիներին յաջողուեց մէկը միւսի ետեւից գրաւել ասուրական նահանգները, Ք.ա. 614ին նախկին մայրաքաղաք Աշշուրը, ապա Ք.ա. 612ին մայրաքաղաք Նինուէն եւ զաւթել ամբողջ բոլն Ասորեստանի տարածքը՝ Նինուէի անկումից յետոյ ասուրական զօրքերի մնացուկները ազնուականների ու վերջին արքայ Աշշուր-ուբալլիտ Բ-ի (Ք.ա. 612-607/605?) գլխաւորութեամբ քաշուելով Միջագետքի հիւսիս-արեւմուտք, իրենց կենտրոնը դարձրին Խառան քաղաքն ու շարունակեցին պայքարը⁶։ Խառանի համար մղուող պայքարը ձգձգուեց. քաղաքը Ք.ա. 610-607ի ընթացքում անցնում էր մերթ ասորեստանեան մերթ հակաասորեստանեան խմբաւորման ձեռքը։ Հէնց այս տարիներին էլ բաբելոնեան զօրքերը Նաբոպալասար (Ք.ա. 626-605) արքայի գլխաւորութեամբ յայտնուեցին Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ գօտիներում։

Այս ժամանակահատուածի վերաբերեալ մեր աղբիւրագիտական հենքը հիմնականում Նոր-բաբելոնեան «Ժամանակագրութիւններն»⁷ են, որոնք յաւելւում են անտիկ ու միջնադարեան հայ պատմիչների երկերով։ Այս աղբիւրներից է, որ մենք պատկերացում ենք կազմում, թէ ռազմական գործողութիւնների ընթացքի ու ընդգրկուածութեան, եւ թէ նրանում ներառուած պետութիւնների ու ժողովուրդների մասին։ Եւ եթէ առաջինի պարագայում մենք որպէս հա-

5 Մանրամասն տե՛ս ՑԱԿԱՆԵԱՆ, Ռ., Ասուրա-բաբելոնեան հակամարտութիւնը եւ Նաբոպալասարի Հիւսիսային արշաւանքները, Ի Պատմա-քանակական համալսարան, 2011, թիւ 1, 262-264; Նոյն, Նաբոպալասարի (Ք.ա. 626-605թթ.) կառավարման 18-րդ տարին (BM 22047, 1-13) «Bīt-mīḫa-a-nu-ni-a»-ի տեղագրութեան հիմնախնդիրը, Միջագետքի գիտաժողովի նիւթեր, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր 2012, 16-17:

6 ՑԱԿԱՆԵԱՆ, Ռ., նշ. աշխ., 265:

7 GRAYSON, A. K., *Assyrian and Babylonian Chronicles* (այսուհետ՝ ABC), New York 1975, Chron. 3; 4; GLASSNER, J.-J., *Mesopotamian Chronicles* (այսուհետ՝ GMC), Atlanta 2004, Chron. 22; 23.

կամարտող կողմ ունենք մի կողմից եգիպտա-ասուրական խմբաւորումն ընդդէմ բաբելոնա-մարականի, ապա երկրորդի պարագայում մասնակիցների աշխարհագրական սահմանն ընդլայնւում է եւ այս կամ այն կերպ հակամարտութեանը մասնակցում են հրեաները, Արեւելամիջերկրածովեան աւազանի երկրները⁸, սկիւթները⁹, հայերը¹⁰ եւ այլք:

ԲԱԲԵԼԱԿԱՆ ԶՕՐԲԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐԸ ԴԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Հստ նորբաբելոնեան «Ժամանակագրութեան», Նաբոպալասարի կառավարման 17րդ տարում՝ Ք.ա. 609ին, ասորեստանցիներին օգնութեան է շտապում Եգիպտոսի փարաւոն Նեխոյ Բ. (Վահեմիբ-ուա) (Ք.ա. 610-595) եւ միաւորուելով Աշշուր-ուբալլիտ Բ.ի հետ՝ ասուրա-եգիպտական ուժերին առաջնորդում է դէպի Խառան: Այս իրադարձութիւնը հետաքրքիր է նրանով, որ խորհրդային մասնագիտական գրականութեան, եւ մասնաւորապէս հայ պատմագրութեան մէջ տիրող էր Ի. Մ. Դեակոնովի այն կարծիքը, որ Նաբոպալասարի հետ միաժամանակ արշաւի են ելնում նաեւ մարերն ու նուաճում Ուրարտուն¹¹:

Այլ բան են վկայում, սակայն, արձանագրութեան տեղեկութիւնները՝ «Ժամանակագրութեան» 70-75րդ տողերի համաձայն՝

«Աֆադի արքան իր զօրքերին օգնութեան շտապեց եւ ... [...] բարձրացաւ դէպի Իզալլա (եւ) բազմաթիւ լեռնային քաղաքներ ... [...] հրի մատնեց նրանց [...]: Այդ ժամանակ (այդ օրերին) [...] զօրքերը մինչեւ Ուրաշտուի շրջան [շա]րժուեցին Է[րկրում(?)] ... [...] թալանեց նրանց: Կայագօրը, որ արքան [...] նրանց մէջ(?) կանգնեցրեց՝ տեղա-

8 ՀԵՐՈՂՈՏՈՍ, Պատմութիւն իմը գրքից, ԿՐԿԵԱՇԱՐԵԱՆ, Ս., (թրգմ. եւ ծմբ.), Է., Երեւան 1986, II, 159; ИОСИФ ФЛАВИЙ, *Иудейские древности*, в 2-х томах, пер. ГИПКЕЛЯ, Г., Москва 1996, X, 5.

9 ԴԻՈՂՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ, Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, № 14, ԿՐԿԵԱՇԱՐԵԱՆ, Ս., (թրգմ. եւ ծմբ.), Է., 1985, II, 43:

10 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Բշ. աշխ., I, ԻԱՅ, 65:

11 ДБЯКОНОВ, И. М., *Малая Азия и Армения около 600г. до н.э. и северные походы вавилонских царей*, Вестник древней истории, 1981, № 2, 42; 8ԱԿԱՆԵԱՆ, Ռ., Բշ. աշխ., 265-266 և ծմբ. 18:

հա]նեցին (եւ) [...] քարձրացան ... (?) քաղ[waf]: Աֆֆադի արքան իր երկիրը վերադարձաւ»¹²:

Հստ արձանագրութեան Նաբոպալասարը մեկնել էր պաշարուած Խառանին օգնութեան, իսկ քիչ յետոյ մարտեր էր մղում Հայկական լեռնաշխարհի մատուցներում՝ Իզալլայի լեռներում¹³: Այստեղ բազմաթիւ քաղաքներ գրաւելուց յետոյ, ըստ արձանագրութեան 72րդ տողի, ինչ-որ զօրքեր, ըստ համատեքստի՝ բաբելոնեան, այլ ոչ մարական, ինչպէս ենթադրում է Ի. Մ. Դեակոնովը, հասնում են մինչեւ «դէպի Ուրաշ/քսուի շրջան» («adi piḫat URU.Úrašû»): Այստեղ մենք շարունակում ենք հետամուտ լինել մեր այն կարծիքին, որ թշնամին, որի հետ Իզալլայում բախուել է Նաբոպալասարը, ասորեստանցիները չէին. իրենց բուն տարածքը կորցրած եւ քաղաքական հոգեվարքի մէջ յայտնուած ասորեստանցիները հազիւ թէ իրենց ռազմութի վերջին մնացորդները հեռացնէին դաշնակից եգիպտացիների պաշտպանութիւնից եւ նետէին քանակապէս ու բարոյահոգեբանական առումով գերազանցող հակառակորդի դէմ¹⁴:

Ուշագրաւ է նաեւ այն հանգամանքը, որ ըստ Ի. Մ. Դեակոնովի՝ Նաբոպալասարի արշաւանքը Խառանից հիւսիս կարող էր պայմանաւորուած լինել նաեւ հումքի պաշարների ձեռք բերելու անհրաժեշտութեամբ¹⁵: Ինչ խօսք, այս մեկնաբանութիւնն այնքան էլ յարիր չէ պատերազմական բուռն ժամանակաշրջանին եւ, հետեւաբար, հազիւ թէ կարելի է հիմնաւոր համարել: Այդուհանդերձ, անուանի արեւելագէտը նկատում է, որ Իզալլայի լեռներում Նաբոպալասարը հանդիպել է յամառ դիմադրութեան, որոնք ո՛չ ասորեստանցիները, ո՛չ եգիպտացիները, ոչ էլ ուրարտացիներն են եղել, այլ ինչ-որ անյայտ մի ուժ, որն ասուրա-բաբելական հակամարտութեան շրջանում փորձել է ընդլայնել իր տարածքը:

Աղբիւրների սակաւութեան պատճառով առայժմ անհնարին է քիչ թէ շատ հիմնաւոր դատողութիւն անել Նիփրատի վերին աւազա-

12 WISEMAN, D. J., *Chronicles of Chaldean Kings (626-556 B.C.) in the British Museum*, London 1956, 20ff., 46, 64ff.; ABC, Chron. 4; GMC, Chron. 23; ДЬЯКО-НОВ, И. М., *Малая Азия и Армения ...* 39-46; ՑԱԿԱՆԵԱՆ Ռ., նշ. աշխ., 266-269; Նոյն, *Նաբոպալասարի (թ.ա. 626-605) կառավարման 18րդ տարին ...*, 17:

13 Մասին լեռները, ներկայիս՝ Թուր-Արդիմը, որից հիւսիս ընկած տարածքը յետագայում կոչւում էր Միջագետք Հայոց:

14 ՑԱԿԱՆԵԱՆ Ռ., *Ասսուրա-քարեյոնեան հակամարտութիւնը ...*, 268-269:

15 ДЬЯКОНОВ, И. М., *Малая Азия и Армения ...*, 41-43.

նույն Հաստատուած այդ քաղաքական գործօնի էթնոքաղաքական պատկանելութեան խնդրի շուրջ: Սակայն, միաժամանակ հաշուի առնելով նախորդ տասնամեակներում տարածաշրջանում տեղի ունեցած էթնոքաղաքական բուռն տեղաշարժերը, կարելի է ենթադրել, որ այստեղ գործ ունենք «Տուն Թորգոմայի» կամ նրա քաղաքական փոխակերպութեան հետ¹⁶: Ամէն դէպքում, բոլոր եզրակացութիւնները շարունակում են մնալ ենթադրութիւնների դաշտում:

Ինչեւէ, Նաբոպալասարի կառավարման 18րդ տարում՝ Ք.ա. 608ին, բաբելական զօրքերը գահաժառանգ Նաբուգոդոնոսորի գլխավորութեամբ նոր արշաւի ելան: Ռազմական գործողութիւնները ծաւալուեցին Հայկական լեռնաշխարհի հարաւարեւմտեան տարածքներում՝ Բիթ-Խանունիայի լեռներում: Նաբոպալասարի կառավարման 18րդ տարուայ արշաւանքի համապատասխան տողերը մէջ ենք բերում ամբողջութեամբ՝

«(1-4) Նաբոպալասարի տասնութերորդ տարին, Ուլուլու¹⁷ ամսին՝ Աքբադի արքան իր զօրքերը հաւաքագրեց եւ Տիգրիսի երկայնքով շարժուեց դէպի Բիթ-Խանունիայի լեռները՝ Ուրաշտուի երկրի շրջանում: Քաղաքները հրի մատնեց (եւ) մեծ քանակութեամբ աւար զուրեց ...»¹⁸:

Ինչպէս նախորդ արձանագրութեան մէջ, այնպէս էլ այստեղ, որեւէ խօսք չկայ բաբելացիների կողմից տարածքային նուաճման մասին: Ինչպէս երեւում է, այս անգամ էլ բաբելացիները մի քանի քաղաք հրի մատնելով եւ, ռազմագերիներ ձեռք բերելով, ետ են վերադառնում:

Այստեղ կրկնութիւնից խուսափելու համար չենք անդրադառնալ Բիթ-Խանունիայի տեղադրութեան մանրամասնութիւններին, այլ նշենք, որ այն կարծես թէ հաստատապէս տեղորոշւում է Իզալլայից հիւսիս կամ հիւսիս-արեւմուտք՝ համապատասխանելով «Աշխարհացոյցեան» Աղծնիք նահանգի Անգեղտուն կամ էլ այդ նահանգի որեւէ այլ գաւառի¹⁹: Այս դէպքում նոյնպէս յայտնի է Բիթ-Խա-

16 Մանրամասն տե՛ս ՔՈՍԵԱՆ, Ա., *Տուն Թորգոմայ* (առասպել եւ իրականութիւն), Երեւան 1998, 55-65; Նոյն, *Արամ նահապետը Կապադովկիայում* (մի վարկածի առթիւ), ի ՊԲՀ, 1999, № 1-2, 237-259:

17 Օգոստոս-Սեպտեմբեր:

18 ABC, Chron. 4; GMC, Chron. 23; Дьяконов, И. М., *Малая Азия и Армения ...* 39-46; ՅԱԿԱՆԵԱՆ Ռ., *Նաբոպալասարի* (Ք.ա. 626-605) կառավարման 18-րդ տարին..., 13-14:

19 Անդ, 29-ի քարտեզը:

նունիայում բաբելացիներին դիմադրութիւն ցոյց տուած հանրոյթի էթնիկական պատկանելութիւնը: Սակայն փոխարէնը մենք տեսնում ենք, որ բաբելացիներն արշաւանք են կատարում դէպի Հայկական լեռնաշխարհի մատոյցներ՝ հեռահար նպատակ ունենալով զարգացնելու իրենց առաջխաղացումը, բայց բախուում են ինչ-որ ուժերի հետ եւ ետ վերադառնում:

Յաջորդ՝ Ք.ա. 607 կամ Նաբոպալասարի կառավարման 19րդ տարում, բաբելացիները կրկին Նաբոպալասարի եւ գահաժառանգ Նաբոզոդոնոսորի գլխավորութեամբ արշաւի են ելնում: Արձանագրութեան այն հատուածները որտեղ խօսուում է բաբելացիների մղած մարտերի ու ակարի մասին՝ վնասուած են եւ յիշատակուող տեղանունը միանշանակօրէն չի վերականգնուում: Տարընթերցումների տեղիք է տալիս մասնաւորապէս արձանագրութեան 11րդ տողը՝ «ih-[tab]-ta EN pi-hat KUR[...(?)...gi-mi]-ir KUR^{me} ik-šu-ud» - «նա նուանց բոլոր լեռները (լեռնային տարածքները)՝ մինչեւ [...(?)...»²⁰; Ա. Ք. Գրեյսոնն ու Ջ.-Ջ. Գլասսները վնասուած հատուածը վերականգնում են որպէս «Uraštu»՝ Ուրարտու²¹, իսկ Ջ. Ռիդն առաջարկում է վերականգնել «tam-[tim(?)]»՝ մինչեւ «Ծովի (ըստ հեղինակի՝ Վանայ լճի շրջան)»²²: Անկախ այն հանգամանքից, թէ որ վերականգնումն է համապատասխանում իրականութեանը՝ միեւնոյնն է, բոլոր դէպքերում էլ մենք գտնուում ենք Հայկական լեռնաշխարհում:

Ընդհանրացնելով վերոշարադրեալը՝ ստացուում է հետեւեալ պատկերը. բաբելոնեան զօրքերը ասուրա-բաբելական հակամարտութեան ժամանակաշրջանում առնուազն երեք արշաւանք են կատարել դէպի Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ շրջաններ:

Ստորեւ ներկայացնում ենք այդ արշաւանքների ժամանակադրութիւնը՝

20 Նշուած տողի քարգմանութեան ու մեկնաբանութեան համար մանրամասն տե՛ս՝ ՑԱԿԱՆՆԵԱՆ Ռ., Նաբոպալասարի (Ք.ա. 626-605) կառավարման 18-րդ տարին..., 25-27:

21 ABC, Chron. 4, 11; GMC, Chron. 23, 11.

22 READE, J. E., *Why did the Medes Invade Assyria?*, History of the Ancient Near East, Monographs – V, Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. LANFRANCHI, G. B. – ROAF, M. – ROLLINGER, R., Padova 2003, 154f.; ՑԱԿԱՆՆԵԱՆ Ռ., Նաբոպալասարի (Ք.ա. 626-605) կառավարման 18-րդ տարին..., 26-27:

Ք.ա. 609ին՝ դէպի Իզալայի շրջան, Ք.ա. 608ին դէպի Բիթ-
 խանունիա, եւ Ք.ա. 607 դէպի Ուրաշ/րտուռի ինչ-որ շրջան կամ դէ-
 պի Վանայ լճի աւազան:

Քննարկուող նիւթի վերաբերեալ սեպագիր-աղբիւրագիտա-
 կան նիւթն այսքանով սահմանափակուած է, եւ վերջինիս շրջանակ-
 ներից դուրս բոլոր եզրակացութիւնները ենթադրութիւնների ոլոր-
 տից են:

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՍՈՐԵՍԱՆԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ վաղմիջնադարեան ու միջնադարեան այն պատմիչները,
 ովքեր իրենց երկերում անդրադարձել են նախապատմական շրջանի
 հայոց պատմութեանը, յաճախ կրկնելով Մովսէս Խորենացուն՝ անդ-
 րադարձ են կատարել նաեւ Ասորեստանի անկմանն ու հայերի մաս-
 նակցութեանն այդ գործընթացում: Դեռ աւելին, հայ մատենագիր-
 ների մօտ Հայկական թագաւորութեան առաջացումն անմիջականօ-
 րէն աղբրուում է հէնց Ասորեստանի անկման գործընթացի հետ:

Խօսելով թագաւորութեան առաջացման մասին՝ Մովսէս Խո-
 րենացին հիացմունքով նշում է. «Եւ այժմ ահա գուարնացայց, ոչ փոքր
 ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ քնիկ
 նախնայն սերունդք ի թագաւորութեան հասանեմ յաստիման»²³:

Հիմնախնդրի լուսաբանման առումով, շատ յաճախ շրջանցե-
 լով համաժամանակեայ սեպագիր-աղբիւրագիտական նիւթի թէկու-
 ղեւ փոքրածիւր յիշատակութիւնները՝ ուսումնասիրողների կողմից
 կարեւորուել են յատկապէս հայ մատենագիրների վկայութիւնները:
 Ընդ որում, կարծրացած է այն պատկերացումը, որ Մովսէս Խորե-
 նացուց յետոյ ապրած եւ իրենց «Պատմութիւնները» շարադրած միւս
 հայ պատմիչները՝ Սեբէոսը, Թովմա Արծրունին եւ այլք, իրենց
 պատմութեան նախաբանը կամ առաջին գլուխը, որտեղ շարադր-
 ւում է հայ ժողովրդի պատմութիւնը սկզբից մինչեւ նրանց ապրած
 ժամանակաշրջանը, օգտուել են Խորենացուց կամ ուղղակի կրկնել
 են նրան: Սակայն, նիւթի խորագինն ուսումնասիրութեան եւ պատ-
 միչների հաղորդումների համադրման արդիւնքում՝ վերոյիշեալ
 կարծիքը չի հաստատուում²⁴:

23 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, I, ԻԱ, 64-65:

24 ՑԱԿԱՆԵԱՆ Ռ., Թովմա Արծրունու նորարարելոցեան արժայացանկը եւ նրա,
 աղբիւրը, էջմիածին, Երեսմ 2010, 61-71:

1. Ասորեստանի անկման ու Հայոց թագաւորութեան առաջացման «մարական» ու «բարելական» տարբերակները

Այսպէս, պատմահայր Մովսէս Խորենացին արձանագրում է, որ Պարոյրը՝ «որդի Սկայորդուոյ», հայկական ուժերի գլուխն անցած, մարական զօրքերի հետ համատեղ, ակտիւ մասնակցութիւն է ցուցաբերել Ասորեստանի դէմ պայքարում եւ շուտով հանդէս բերած իր պատրաստակամութեան դիմաց Մարաստանի թագաւոր Վարբակէս-կիաքսարից՝

«Յինքն եւ գեաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուք եւ ձեւ նմա խոստանալով ... եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի եւ Նիւնուէի: Բայց վերականցու գայլս թողով Ասորեստանի՝ փոխէ զթագաւորութիւնն ի Մարս»²⁵:

Պատմահօր այս յիշատակութիւնը ուսումնասիրողների կողմից տարբեր գնահատականների է արժանացել, սակայն, մէկ հանգամանք փաստ է, որ ըստ Խորենացու յիշատակութեան՝ Պարոյրը²⁶ հայ-

25 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, I, ԻԱ, 65: Մինչդեռ Թովմա Արծրունին Պարոյր Հայկազնին չի նանաչում որպէս առաջին թագաւոր՝ «վարբակայ Մարի բարձեալ գիշխանութիւնն Ասորեստանեայց՝ զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ եւ թագապատիւ իշխանութեամբ մեծարեալ՝ տայ զօր բազում յօգնականութիւն, և դարձեալ հաստատէ զթագաւորութիւն Հայոց»։ ԹՈՎՄՍՅ ԱՐՄՐՈՒՆԻ, Պատմութիւն տանն Արծրունեաց, (թրգմ. եւ ծմթ.) ՎԱՐԴԱՆԵԱՆ, Վ. Մ., Երեւան 1985, I, Դ, 58: Այսինքն՝ պետութիւն որպէս այդպիսին չի առաջանում, այլ, ինչպէս յիշատակում է Պատմահայրը, նանաչում է, կամ վերականգնում է ըստ Թովմա Արծրունու:

26 Պարոյր Հայկազն-Սկայորդու մասին մանրամասն տես՝ ՂԱՓԱՆՑԵԱՆ, Գ. Ուրարտուի պատմութիւնը, Երեւան 1940, 217-219; ՊԻՏՏՐՈՎՍԿԻ, Բ., Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը, ի Տեղեկագիր հասարակական գիտութիւնների, 1945, № 6, 20; Նոյն, О происхождении армянского народа, Ер. 1946, 21; ՏԻՐԱՑԵԱՆ, Գ., Հին Հայկական պետութեան առաջացումը, ի ՊԲՀ, 1966, № 4, 94, 98; ինչպէս նաեւ տես՝ Հայկազունիներ, միջազգային գիտաժողովի յօդուածների ժողովածուն, գլխ. խմբագիր՝ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆ, Վ., 2013; ԽԱԶԱՏՐԵԱՆ, Վ. Ն., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում (Հայոց հին պատմութիւն), Էջմիածին 1998, 133-143; Նոյն, Հայոց հին պատմութեան հարցեր (Ակնարկներ հայոց հին պատմութեան), Էջմիածին 2010, 15-21; ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Բ. Հ., Հայաստանի, հայ-իրանական յարաբերութիւնների եւ Առաջաւոր Ասիայի հնագոյն պատմութեան մի էանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Էջմիածին 1998, 34-58, 81-85; ՄՈՒՇԵՂԵԱՆ, Ա. Վ.,

կական առաջին թագաւորութեան հիմնադիրն է: Որպէս իր խօսքի հաստատում Պատմահայրը նշում է.

«Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ եւ Երեմիա²⁷ մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն եւ Ասփանագեան գնդին»: Եւ այս հաւաստի գոյոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»²⁸:

Այստեղ հետաքրքիր է նաեւ մի հանգամանք՝ որ խորենացին ընդգծում է, թէ այս պատումն ունի նաեւ այլ տարբերակներ՝ «Այլ այս եթէ առ այլս այլազգաբար պատմի՝ մի՛ ինչ սփանչանար»²⁹:

Այսպէս, խորենացին ինքն է արձանագրում, որ իր ձեռքի տակ եղել են բազմապիսի աղբիւրներ, որոնցից շատերը Պատմահայրը յղում է: Սակայն, ինչպէս երեւում է, խորենացին քննադատաբար է մօտեցել իր աղբիւրներին, դեռ աւելին՝ նրանցից զատել այն, որն աւելի ճշմարտացի է համարել՝ «... եթէ բազում ազգաց լեալ մատենագիրք, որպէս ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից եւ Քաղդէացոց, յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք գծունացն միայն յիշեցաք՝ զպատմագիրս, եւ անտի գլայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել»³⁰:

Ինչպէս երեւում է խորենացու իսկ յիշատակութիւնից նա նախապատուութիւնը հիմնականում տուել է յունական աղբիւրներին: Վերջինիցս էլ պէտք է բխեցուի նաեւ խորենացու՝ Ասորեստանի անկման գործընթացում մարերին նախապատուութիւն տալը: Վերոշարադրեալից կարելի է ենթադրել, որ նրա ձեռքի տակ եղել են նաեւ այնպիսի աղբիւրներ, որոնցում Ասորեստանի կործանման պատմութիւնը դիտարկուած են եղել Բաբելոնիայի տեսանկիւնից:

Մովսէս Խորենացու դարը, էջմիածին 2007, 67-170; հմմտ. ԿՐԿԵԱՇԱՐԵԱՆ Ս. Մ., Հին Հայաստանի պետական կառուցումները (Մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), էջմիածին 2005, 25-33, 153, եւ բազում այլք:

27 Եմ Ծա, 27-29

28 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, I, ԻԲ, 67:

29 Անդ, 66: Խորենացին մեղադրում է նաեւ իր նախորդներին, որոնք հոգ չէին տարել յիշատակութիւններ թողնելու համար՝ «... զի եթէ որք յառաջ քան զմեզ եւ կամ առ մեծ եղեն հարուստ եւ իշխան աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել գլխատակս բանից, եւ ոչ արտափուսու ուստեք այսոցիկ ի ներքս ածել խորհեցան օծանդակութիւնս իմաստից» I, Ա, 6:

30 Անդ, I, Բ, 7:

Առաւել եւս, որ դրա օգտին է վկայում Պատմահօր հետեւեալ արտայայտութիւնը. «Քանզի եւ որք ի հօրէն Նաբուգոդոնոսորայ գործք, գրեցան յիւրեանց յիշողութեանցն վերակացուաց...»³¹:

Այստեղ եզրակացութիւնն աւելի քան միանշանակ է, որ Պատմահայրն իր ձեռքի տակ եղած երկու աղբիւրների միջեւ նախապատուութիւնը տուել է «մարական» տարբերակին՝ Ասորեստանը կործանողին եւ հայոց առաջին արքային թագադրողի դերը վերապահելով ոչ թէ Նաբոպալասարին կամ Նաբուգոդոնոսորին, այլ «Վարբակ» - Կիաքսարին: Այսպիսով ակնյայտ է, որ խորենացին իր ձեռքի տակ ունեցել է նաեւ «քարելական» տարբերակը:

Յաջորդ հայ պատմիչը, որն անդրադարձել է վերոյիշեալ թեմային, Սեբէոսն է: Նրա յիշատակութիւնները, սակայն, աւելի շուտ հակասում, քան թէ համընկնում են Մովսէս խորենացու վկայութիւններին: Ինչպէս տեսանք Պատմահայրը Հայաստանի տուեալ ժամանակաշրջանի պատմութիւնը եւ հայոց թագաւորութեան հաստատումը կապում է Մարաստանի հետ, մինչդեռ Սեբէոսը՝ Բաբելոնի: Դեռ աւելին՝ Սեբէոսի մօտ Պարոյրի փոխարէն հանդէս է գալիս Փառնաւազը³²: Վերջինս, ըստ խորենացու հայոց նահապետների ցուցակի, Պարոյրի թոռն է³³:

Անդրադառնալով ժամանակաշրջանի իրադարձութիւններին՝ Սեբէոսը նշում է. «Այս Փառնաւազ հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն: Եւ ապա յայնմհետէ Բաբելացւոց եւ Մարաց Թագաւորքն տիրեցին մինչեւ ցԱղեքսանդր Մակեդոնացի...»³⁴:

31 Անդ, I, ԻԱ, 66:

32 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵԲԷՈՍԻ, (աշխտ.) ԱՐԳԱՐԵԱՆ, Գ. Վ., Երեւան 1979, Ա: 30, 51: Մովսէս խորենացու եւ Սեբէոսի հայոց նահապետների ցանկերի համադրման համար մանրամասն տես՝ ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., *Տիգրան Մեծը եւ Հայկազունիները համաձայն խորենացու եւ Սեբէոսի*, Հայկազունիներ, 2013, 43-44, Յաւելումս Գ. 2ում հեղինակը համադրում է նաեւ խորենացու ու Սեբէոսի ցուցակները: Նշեմք նաեւ, որ Սեբէոսի ցանկի ճիշդագրութիւնը հետաքրքիր է նրանով, որ այնտեղ ներկայացուած են նաեւ Արամեմակ/Արամեմակ/-ի չորս որդիներն ըստ աւագութեան՝ Ջարեհ-Հարմա-Կադմոս-Արամայիս: Փառնաւազը Ջարեհի սերնդից չորրորդն է՝ Արմոզ-Սարհանգ-Շաւարշ-Փառնաւազ: Փառնաւազի յաջորդներն են Բագամն ու Բագարատ Անգեղը: Արամայիսի սերնդեան ճիշդագրութիւնը համապատասխանում է խորենացու ցուցակին՝ Ամասիա-Գեղամ-Հարմա-Արամ-Արա Գեղեցիկ: Ինչպէս երեւում է Արամայիսի սերնդից չորրորդը՝ Արամն է Արա Գեղեցիկի հայրը:

33 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Պատմութիւն Հայոց*, I, ԻԲ, 68-69:

34 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵԲԷՈՍԻ, Ա: 30, էջ 51:

Մինչ փառնալուստի մասին յիշատակութիւնը Սեբէոսը նշում է, որ Հայաստանին Շամիրամի տիրելուց յետոյ՝ «... յայնմհետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչեւ ցմեռանելն Սեմեֆարիմայ. ապա ապստամբեցին յասորոց թագաւորացն ծառայութենէ:

Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամեմակայ, ... ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւագ»³⁵:

Վերոշարադրեալից յետոյ Սեբէոսը ներկայացնում է փառնալուստի սերունդներին՝ տեղորոշելով նաեւ նրանց տիրապետութեան սահմանները, որոնք համընկնում է Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջաններին՝ Մեծ Հայքի Աղձնիք եւ Ծոփք նահանգներին՝ «Սա (փառնաւագը – Ռ.Յ.) ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիւրատ, եւ Բիւրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ...»³⁶:

Այստեղ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում այն հանգամանքը, որ, ըստ Սեբէոսի, Նաբուգոդոնոսորին հնազանդուած փառնալուստի տիրոջութենը համապատասխանում են Իզալլայից հիւսիս ընկած տարածքներին եւ Բիթ-Նանունիային: Սեպագիր աղբիւրն այս պարագայում ոչ միայն համահունչ է Սեբէոսի յիշատակութեանը, այլեւ համադրւում է նաեւ ժամանակագրական առումներով: Դեռ աւելին, ինչպէս վերը նշուեց՝ բաբելոնեան զօրքերը Հայկական լեռնաշխարհում մարտեր էին մղում հէնց Բաբելոնի ապագայ թագաւոր՝ գահաժառանգ Նաբուգոդոնոսոր Բ.ի (Ք.ա. 605-561) գլխաւորութեամբ: Անչափ կարեւոր հանգամանք, որ վրիպել է տուեալ ժամանակաշրջանի Հայոց պատմութիւնն ուսումնասիրողների տեսադաշտից: Մինչդեռ երեւոյթի քննութիւնը համալիր ուսումնասիրման կարիք ունի, անհրաժեշտ է, որ այն համահունչ լինի ոչ միայն ժամանակագրական առումով եւ ընդգրկուի այս կամ այն իրադարձութեան համատեքստում, այլեւ հաստատուի աղբիւրագիտական տուեալներով: Այս պարագայում ենթադրական եզրակացութիւննե-

35 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՐԷՆՍԻ, Ա: 20-25, էջ 51: Գտնում ենք նաեւ, որ յաջորդ Բ գլխում կապուած Արշակ արքայի և Մծուրնի պատմութեան մեջ յիշատակուած «Բագարատն Փառագեան»-ը պետք է սրբագրուի որպէս «Բագարատն Փառնաւագեան» (ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՐԷՆՍԻ, Բ: 5, էջ 54), այստեղ պարտադիր չէ Բագարատին տեսնել որպէս Փառնաւագի որդի, այլ որպէս Փառնաւագեան տոհմից:

36 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՐԷՆՍԻ, Ա: 25-30, էջ 51:

ըը կարող են եւ տեղաւորուել տուեալ ժամանակահատուածի իրադարձութիւնների հիմքում:

Իսկ ինչ վերաբերում է Սեբէոսի այն յիշատակութեանը, որ բաբելոնացիներից յետոյ «...Մարաց քագաւորքն տիրեցին միմչեւ ցԱդեֆսանդր...», ապա այստեղ պատմիչը կարող է եւ նկատի ունենար Պարսից Աքեմենեան տէրութիւնը, որովհետեւ Ք.ա. 550ից յետոյ մարերը չէին կարող տիրել մինչեւ Աղեքսանդր Մակեդոնացի: Այսպէս, ակնյայտ է, որ Սեբէոսի պատումի հիմքում ընկած է կամ Խորենացու յիշատակած ու մեզ չհասած «քաբելական» կամ մէկ այլ ուրիշ աղբիւր:

2. Փառնաւազ - /Φαρνάβαζος/ - Vindafarnā/h - /Ἰνταφέρνης/

Այսպէս, ինչպէս տեսանք հնարաւոր է Փառնաւազին թուագրել Ք.ա. Է. դարի վերջին տասնամեակով եւ Ք.ա. 2. դարի սկզբներով³⁷,

37 Հայ պատմագիտական միտքի ներկայացուցիչները հիմք ընդունելով Հայր Միքայէլ Զամչեանի կողմից Հայկագուն նահապետների առաջարկած անյայտ ծագման թուագրումները (Փառնաւազի համար տալիս է ԺԳ/13/ տարի՝ ԶԱՄԶԵԱՆ, հ. Մ., Հայոց պատմութիւն, Ա., Երեւան 1985, 101)՝ փորձել են կազմել իրենց արձայացանկերը: Օրինակ ըստ Բ. Հ. Յարութիւնեանի նա կառավարել է Ք.ա. 586-573 եւ հանդիսանում է Երուանդ սակաւակեացի նախորդը եւ Էրիմեմա-Արմանի-Արամի թոռը՝ (ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Բ. Հ., նշաշխ., 84): Հեղինակը յաճախ չի բացում իր գիտական խոհանոցը, օրինակ Տիգրան Երուանդեանի մահուան առումով նշում է. «որոշ տուեալների համաձայն, նա մահացել է Կիրոս Մեծի մահուան 5րդ տարում»: Այստեղ ակնյայտ է արհեստականութեան տարրը: Հայ պատմիչներից միայն Թովմա Արծրունին է խօսում նրա մահուան մասին եւ կարելի էր գտնել յիշատակել այն: Իր հերթական գլուխը Թովմա Արծրունին վերագրել է՝ «Յետ Կիրոսի Կամբիսես, Շմերգիստոգ, Դարեհ Վշտասպա. Ի քսաներորդի ամի Դարեհի մեռաւ Տիգրան Հայկագեան»՝ (ԹՈՎՄԱՅ ԱՐԾՐՈՒՆԻ, Ա., Զ.): Դարեհ Ա.ը կառավարել է Ք.ա. 522-486, իսկ նրա կառավարման 20րդ եւ Տիգրանի մահուան տարին կը լինի՝ Ք.ա. 503 թուականը: Քիչ այլ է Վ. Ն. Խաչատրեանի կարծիքը, ըստ նրա Փառնաւազը կառավարել է Ք.ա. 624-611ին եւ ոչ թէ Էրիմեմայի թոռն է այլ հենց ինքն էրիմեման՝ ԽԱԶԱՏՐԵԱՆ Վ. Ն., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, 31: Էրիմեմայի թեման այստեղ ամենաուշագրաւն է: Հայկագիտական ու արհեստածին մի հանգամանք, որ կարծես թէ յարաշարժութեան ուժով շարունակուում է նաեւ այսօր, ամուշադրութեան մատնելով կամ միտումնաւոր ամոտեսելով ուրարտագիտութեան ձեռք բերած նուաճումները: Մինչդեռ, դեռեւս 2004ին հրատարակուեց Է. Գրեկեանի մի ուշագրաւ յօդուածը, որտեղից պարզ դարձաւ, որ Ռուսա Էրիմեմա-

իսկ անուանաբանական առումով այն գործածական է առնուազն Բ.ա. Թ. դարից մարերի շրջանում³⁸:

Սակայն, ամբողջ վերոշարադրեալը դեռևս հիմք չի կարող հանդիսանալ, որպեսզի Փառնալագին դիտարկենք, որպես գոյութիւն ունեցող պատմական անձի: Բարեւական «Ժամանակագրութիւններում», ինչպէս տեսանք, բացի տեղագրական անուններից այլ անուններ չկային, իսկ վաղմիջնադարեան պատմիչների հաղորդումները դեռևս բաւարար չեն: Որպէսզի ընթացքից մեր եզրակացութիւնն արհեստածին բնոյթ չստանայ, փորձենք դիմել յարակից գիտութեան՝ համեմատական լեզուաբանութեան օգնութեանը:

Այսպիսով՝ «Փառնալագ» անունն, ինչպէս խորենացու եւ Սեբեոսի հայ նահապետների մի շարք այլ անուններ՝ իրանական կամ հնդիրանական են: Իրականում Փառնալագ նահապետ-արքայի անունն, ինչպէս պարզուրում է, ոչ միայն յատուկ էր հնդիրանական աշխարհին այլեւ բաւական տարածուած էր: Դեռ աւելին՝ ժամանակագրորէն եւս այն բաւական գործածական էր Բ.ա. Զ. դարի սկզբներին, անգամ Հայկական լեռնաշխարհի արեւմտեան եւ հարաւ-արեւմտեան շրջաններում: Վերջինիս մասին է վկայում Ա. Վ. Քոսեանի մի ուշագրաւ բացայայտում: Նա նշում է, որ Հայկական լեռնաշխարհում, եւ մասնաւորապէս Իսովա-Մոփքում առկայ են հնդիրանցիների հետքեր, ինչի վկայութիւնը Բ. ա. ԺԵ.-ԺԴ. դարերով թուագրուող խեթական երկու տեքստերում յիշատակուող հնդիրանական անուններն են³⁹: Նրա կողմից առաջին անգամ իրենց գիտական տառադարձմամբ, թարգմանութեամբ ու մեկնաբանութիւններով գիտական աշխարհին ներկայացուած այդ տեքստերից, այստեղ

յորդուն պէտք է փնտռել ոչ թէ Ռուսա III Արգիշթիորդու յաջորդների մէջ, այլ նախորդների՝ ԳՐԵԿԵԱՆ, Է., *Գեօւելեֆի ուրարտական արձանագրութիւնը*, ՊԲՀ, 2004, № 1, 248-249: Այսօր արդէն ապացուցուած կարելի է համարել, որ Ռուսա II Էրիմնայորդին կառավարել է Բ.ա. 713-708ին՝ ԳՐԵԿԵԱՆ, Է. Հ., *Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը եւ ուրարտական արքայացանկը «Նրեֆ Ռուսաներ»-ի խնդրի շուրջ*, Ի ՎԵՄ, 2017, № 2, 23-37:

38 HINZ, W., *Altiranisches Sprachgut der Nebenüberlieferungen*, Wiesbaden 1975, 94f.; MAYRHOFER, M., *Iranisches Personennamenbuch*, Band I, Die Altiranischen Namen, Wien 1979, no. 57.

39 KOSYAN, A., *An Aryan in Išuwa, Iran and the Caucasus*, 2006, vol. 10/1, 1ff.; Նոյն, *Արիացիները Պախտուպայում, Ի Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ*, 2006, XXV, 247-248; Նոյն, *Հայոց վաղ պետականութեան պատմութեան մի խնդրի շուրջ*, Ի Բանբեր Հայագիտութեան, 2014, № 1, 9-10:

կարեւոր է KBo XVI 42-ի համապատասխան հատուածը⁴⁰։ Այս տեքստի 26րդ տողում յիշատակուած է «^mÚ-it-tar-n[a(-)]» անունը։ Այն, մինչ օրս յայտնի՝ հին իրանական «Viⁿdarna» անունի կիրառման ամենալավ ձեւն ու յիշատակութիւնն է⁴¹։ Այսպիսի, ինչպէս երեւում է «Փառնաւազ» եւ «Վ/Ուիդարնայ» անունները ոչ միայն պատկանում են նոյն լեզուամշակութային տարածքին, այլեւ հանդէս են գալիս նոյն տարածքում⁴²։

Հայագէտ Հ. Մարտիրոսեանը լեզուաբանական վերլուծութեան ենթարկելով Փառնաւազ /P^arnawaz/ անունը՝ գտնում է, որ այն համապատասխանում է պարթեական Farnbāz [prnbzw]-ին, յունական՝ «Φαρνάβαζος»-ին, արամէական՝ Prnbzwին։ Փառնաւազ անունի առաջին «փառնա» բաղադրիչը ծագում է իրանական farnah (*x^warnah-/farnah-), farn, frh, prh, /farrah/ (հմտ. հայերէն «փառհ»), իսկ երկրորդը՝ «վազ»ը, դեռեւս գտնում է քննարկումների փուլում, սակայն գտնում ենք, որ անունը կարելի է թարգմանել նաեւ որպէս «նա, ով փառհ ունի» կամ «փայլող փառհ»։ Մ. Մայրհոֆերն՝ այն ծագած է համարում Vi-dat.x^varənah ձեւից եւ թարգմանում «նա, ով (farnah) փառհ է գրտնում»⁴³։ Farr(ah)/x^varənah – անունն արտացոլում է նաեւ վերոյիշեալ յունական «Φαρνάβαζος» ձեւը⁴⁴։

Կասկածից վեր է, որ վերոյիշեալ անունը ծագում է իրանական *Vinda-farnah - «Farnah-գտնող/շահող» ձեւից. հին պարսկերէն (մարական(?))՝ Vindafarnā [Vi-i-d-f-r-n-h-]⁴⁵, միջին էլամերէն՝ Mindaparna⁴⁶, ա-

40 KOSYAN, A., *An Aryan in Išwā*, 4ff.

41 ՔՈՍԵԱՆ, Ա., Հայոց վաղ պետականութեան պատմութեան մի խնդրի շուրջ, 11։

42 Այստեղ չպէտք է մոռանալ, որ Մեծ Հայքի «Աշխարհացոյցեան» վարչապաշտական քաղաքումն աւելի ուշ շրջանի է պատկանում։ Նշուող ժամանակահատուածում Խուվա-Ծոփն աւելի ընդարձակ էր քան «Աշխարհացոյցեան» Ծոփ մահազը, եւ ամենայն հաւանականութեամբ՝ իր մէջ ներառում էր նաեւ Աղձնիքի եւ յարակից մի շարք այլ տարածքներ։

43 MAYRHOFER, M., *Iranisches Personennamenbuch*, no. 57.

44 Անուան աֆաղական, էլամական եւ յունական գուգահեռների վերաբերեալ մանրամասն տե՛ս՝ HINZ, W., *Altiranisches Sprachgut der Nebenüberlieferungen*, 94f., 297.

45 Անուան յիշատակութիւնը Բեհիսթունեան արձանագրութիւնում՝ KING, W. and THOMPSON R. C., *The Sculptures and Inscription of Darius the Great on the Rock of Behistun in Persia: A New Collation of the Persian, Susian and Babylonian Texts*, London 1907, «Vidafarnānāma Vahayasparahayā puça Pārsa»՝ «Վիդաֆար-

րամէական՝ Wndprn, յունական՝ Ἰνταφέρνης, պարթեական՝ Windafarn[wyndprn], միջին պարսկերէն եւ ասորերէն՝ Gundafar⁴⁷:

Վերոյիշեալ Վինդաֆարնան հին պարսկական (հնդիրանական(?)) յայտնի տոհմից էր, եւ իր գործունէութեամբ աչքի էր ընկել դեռեւս Կիւրոս Մեծի (Ք.ա. 550-529) ժամանակներում⁴⁸: Վինդաֆարնան պատկանում էր Դարեհ Աքեմենեանի այն 6 համախոհներին թուին, որոնք նրան օգնեցին տապալել մոգ Գառմատային եւ Բաբելոնում ճնշել ազգութեամբ հայ Նաբուգոդոնոսոր IV-ի (Խալդէտայի որդի Արախայ) ապստամբութիւնը⁴⁹: Վինդաֆարնայի անունը, սակայն եզակի չէ. Իսուվա-Մոփքից եւ նոյն Բեհիսթունեան արձանագրութիւնից⁵⁰ յայտնի վերոյիշեալ «^mŪitarn[a]-Vindarna» անունը պէտք է, որ ծագած լինի նոյն արմատից ինչ-որ Վինդաֆարնայի անունը:

Այսպէս, վերոշարադրեալը մեզ թոյլ է տալիս միանշանակօրէն ժխտելու եւ վերանայելու մինչ օրս պատմագրութեան մէջ՝ Ք.ա. է. դարավերջի եւ Ք.ա. 2. դարասկզբին տիրող քաղաքական իրավիճակի վերաբերեալ արծարծուած վերը քննարկուած յայտնի տեսակէտները:

ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆԵԱՆ

նա որդի Վահայասպարայի՝ պարսիկ» Col. III, 84, 86, 88; Col. IV, 83; տե՛ս նաև՝ ՀԵՐՈՒՄՈՍՍ, Պատմութիւն, III, 118-119:

46 Անունն արձանագրութեան ափադական եւ էլամական հատուածներում արձանագրուած է նոյնկերպ՝ KING, W. and THOMPSON R. C., *The Sculptures and Inscription*, op. cit., Col. III, 40ff., 89f.

47 Աշխատանքում ներկայացուող համեմատական լեզուաբանութեան հատուածը պատկանում է հայագէտ-հնդեւրոպաբան ՀՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ, ով իր դեռեւս անտիպ եզրակացութիւններով սիրով կիսուեց մեզ հետ, ինչի համար մեր երախտագիտութիւնն ենք յայտնում:

48 ՔՍԵՆՈՓՈՆ, *Կիւրոպեդիա*, նշ. աշխ., VIII, 3, 21:

49 KING, W. and THOMPSON R. C., *The Sculptures and Inscription of Darius the Great*, op. cit., Col. III, 76-92; ДАНДАМАЕВ, М. А., *Политическая история Ахеменидской державы*, М. 1985, 77, 79, 92-95, 99; նոյն, *Иран при первых Ахеменидах (VI в. до н.э.)*, М. 1963, 174, 176-178, 184-186.

50 KING, W. and THOMPSON R. C., *The Sculptures and Inscription of Darius the Great*, «Vidarna nāma Bagābigna hāyāpuça Pārsa»՝ «Վինդարնա որդի Բագափիզնայի՝ պարսիկ» Col. II, 19, 21; Col. IV, 84: էլամական տարբերակի՝ Mitarna, Miturna (Col. II, 13, 15, Col. III, 91), ափադական տարբերակի՝ Ūmidarna-, Ū(-) darna, արամէական՝ Wdrn, լիկիան՝ Widrna, յունական՝ Ὑδάρνης, Idarnēs, Idarnēs, եւ այլն՝ MAYRHOFER, M., *Iranisches Personennamenbuch*, no. 58, p. 29.

Summary

P'ARNAWAZ – AN ARMENIAN KING?
(THE BABYLONIAN VERSION OF KHORENATSI OR THE
SEBEOSIAN VERSION OF THE FALL OF ASSYRIA)

RUSLAN TSAKANYAN

In this article an attempt is made on the basis of the Babylonian Chronicles and Armenian medieval historians Movses Khorenatsi and Sebeos to describe the political situation in the Armenian Highlands at the end of the 7th century BC. In his monumental work, Khorenatsi mainly preferred Greek sources, hence the Median version of the fall of the Assyrian state. But Khorenatsi clearly possessed other sources as well, according to which the fall of Assyria was considered from the point of view of Babylon. Moreover, Khorenatsi himself does not deny the existence of this fact – “For the deeds of the father Nabuchadnezzar were written down by the supervisors of their annals ...”. Here the conclusions are more than clear: there were two versions available to Khorenatsi according to which the first Armenian king was crowned not by Nabopalassar or Nebuchadnezzar, but by the Median king Varbakes-Cyaxares.

In the work of Sebeos we come across only the Babylonian version, where the above mentioned events are connected with Babylon. Sebeos notes: “This P’arnawaz submitted to the king of Babylon Nebuchadnezzar, and since then was ruled by the kings of the Babylonians and Medians before Alexander the Great.” Sebeos reports that the possession of P’arnawaz were located in the southwestern regions of the Armenian Highland – in Ałdznik (Աղձնիք) or Sophene (Isuwa, Տոփք), in particular in the region of Angełtun (Անգեղտուն) of the Armenian Geography. The name of P’arnawaz appears in the list of Armenian kings and patriarchs in Khorenatsi’s work. The records of Sebeos are similar to the Babylonian Chronicles. Of the latter, we know that during the Assyrian-Babylonian conflict (626-605 BC), the Babylonian army led by kings Nabopalassar and Nebuchadnezzar, the heir to the throne, appeared at least three times on the borders of the Armenian Highlands. Perhaps they moved further into the highlands – in 609 BC to the Izalla area, in 608 BC to Bet-Hanuniya and in 607 BC “to the district of Uraš/rtu” or “to the district of the sea” [in the basin of Lake Van or Lake Hazar (?)].

In this article an attempt is made (on the basis of the "Babylonian Chronicles" and Armenian medieval historians Movses Khorenatsi and Sebeos) to restore political situation in the Armenian Highland at the end of VII century B.C. In his monumental work M. Khorenatsi mainly preferred Greek sources. Hence originates the "Median" version of the fall of the Assyrian state. But M. Khorenatsi obviously possesses with other sources also, according to which the fall of Assyria was considered from the point of view of Babylon. Moreover, M. Khorenatsi himself does not deny the existence of this fact – "For the deeds of the father Nabuchadnezzar were written down by the supervisors of their annals...". Here the conclusions are more than clear: under the hand of M. Khorenatsi there were two versions according to which the first Armenian king was crowned not by Nabopalassar or Nebuchadnezzar, but by the Midian king "Varbakes"-Cyaxares. And in the study of Sebeos we meet only the "Babylonian" version, where the above mentioned events are bound to Babylonia. Sebeos notes: "This P'arnawaz submitted to the king of Babylon Nebuchadnezzar. And since then was owned by the kings of the Babylonians and Midian before the Alexander the Great". Sebeos reports that the possession of Parnawaz were located in the southwestern regions of the Armenian Highland - in Ałdznik (Աղձնիք) or Sophena (Isuwa, Մոփս), in particular, in the region of Angełtun (Անգեղտուն) of the "Armenian Geography". The name of P'arnawaz occurs in the list of Armenian kings-patriarchs in M. Khorenatsi's work. The records of Sebeos are similar to the "Babylonian Chronicles". Of the latter, we know that during the Assyrian-Babylonian conflict (626-605 B.C.), the Babylonian army, led by King Nabopalassar and Nebuchadnezzar, the heir to the throne, appeared at least three times on the borders of the Armenian Highland. Perhaps they moved further into the highlands - in 609 B.C. in the Izalla area, in 608 B.C. in Bet-Hanuniya and in 607 B.C. "to the district of Uraš/rtu" or "to the district of Sea (in the basin of Lake Van or Lake Hazar (?))".